10.57192/18291864-2023.4-206

Սերգեյ Ա. Աղաջանյան
Բանասիր. գիտ. դոկտոր

Արսինե Ս. Աղաջանյան
Բանասիր. գիտ. թեկնածու

«ՈՉԻՆՉ» ԲԱՌԻ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՏԻՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ*

Բանալի բառեր – ոչինչ, միտք և խոսք, պարադոքս, մանիպուլյացիա, մանիպուլյատիվ վարքագիծ, հոգեմտավոր ներգործություն, բազմիմաստություն, չգոյություն, անէություն, չնչին, ունայն, անորոշություն, ինքնամանիպուլյացիա, մանիպուլյատիվ իլյուզիա:

Մուտք

Մանիպուլյացիան ընդհանրապես կենդանական աշխարհին և հատկապես մարդուն բնորոշ վարքային իրողություն է՝ մշտառկա մարդու կենսագործունեության բոլոր ոլորտներում՝ սկսած միջանձնային հարաբերություններից և ավարտած միջպետական-քաղաքականով: Լինի այն ժամանցային ձեռնածության պես անմեղ մի բան, թե անգամ նպատակադիր խաբեություն, ի վերջո գործադրվում է մի կարևոր նպատակով՝ դիմացինին /լինի անհատ, թե խումբ/ համոզել մի բանում, անել տալ մի բան, ինչը պետք է մանիպուլյատորին: Այստեղ հարկ է նկատի ունենալ, որ ասվածից չի կարելի եզրակացնել, թե մանիպուլյացիան միանշանակ բացասական իրողություն է: Դժվար չէ գլխի ընկնելը, որ այն կարող է գործադրվել ինչպես դրական, այնպես էլ մերժելի նպատակներով:

Մանիպուլյատիվ վարքագիծը և՛ կենդանիներին, և՛ մարդուն տրված է ի ծնե՝ գենետիկորեն: Այն էլ այնպես, որ սուբյեկտը կարող է և չգիտակցել, որ իր վարքը մանիպուլյատիվ է, որովհետև այն

* Հոդվածն ընդունվել է տպագրության 23.09.2023:

իրականացնում է ենթագիտակցորեն: Սակայն մանիպուլյացիայի դրսևորման բազմաթիվ ոլորտներ կան, որոնցում այն գործադրվում է լրջորեն գիտակցված ու հաշվարկված նկատառումներով՝ որպես խաբեություն: Վերջինը լայնորեն գործադրում են լրատվության զանազան միջոցները՝ մարդկանց վրա հոգեմտավոր ներգործության, դա իրականացնողների համար ցանկալի հասարակական կարծիք ձևավորելու և այլ նպատակներով[1]: Այդ առումով մանավանդ նորագույն ժամանակներում ակտիվորեն շահագործվում են նաև գեղարվեստական պատկերավորման պայմանականությունները (հատկապես արվեստում, ժամանցային շոու-միջոցառումներում և այլուր), որոնք օժտված են ակտիվ հոգեմտավոր ներգործության կարողությամբ: Պիտի նկատի ունենալ նաև, որ, անկախ մանիպուլյացիայի ենթագիտակցական-վարքային, թե լավ մտածված լինելուց, մանիպուլյատորն անպայման ունենում է և՛ որոշակի նպատակ, և՛ այն իրականացնելու ծրագիր:

Ինչևէ, ավելի չընդարձակելով մանիպուլյացիայի ընդհանուր նկարագրի հրողությունների և դրանց դրսևորման տեսակների ներկայացումը, միայն ընդգծենք հետևյալ կարևոր հանգամանքը: Շնորհիվ մարդու նկարագրից և համակեցությունից նրա անբաժանության, ըստ էության, մեզանից յուրաքանչյուրն ու բոլորս միասին անխուսափելիորեն և՛ մանիպուլացնում ենք, և՛ մանիպուլացվում, ինչը հաստատվել է նաև հոգեբան գիտնականների ուսումնասիրություններով. «.... практически любой человек – в той или иной степени и сфере жизни - «манипулятор», т. к. постоянно занят тем, что манипулирует окружающими и вместе с тем надежно пойман в сети своих и чужих»[2]:

Ինքնըստինքյան պարզ է, որ մարդկային համակեցության մեջ մանիպուլյացիայի ամենատարածված ու գործադրվող տարբերակը խոսքայինն է, որի փոխանցած բովանդակությունը միշտ ուղեկցվում է նաև հուզազգացական կամ այլ կերպ ասած՝ հոգեբանական ներգործությամբ: Դրա նպատակը մանիպուլյացիան անկասելի

1 Տե՛ս «Политическая энциклопедия», ред. **Г. Ю. Семигин**, т. 1, М., 2000, էջ 656:

2 **Мещерякова Б., Зинченко В.**, Большой психологический словарь, Санкт-Петербург, 2006, с. 275.

Թարգմանությունը՝ ըստ բովանդակության. «.... գործնականում յուրաքանչյուր մարդ այս կամ այն չափով և կյանքի այս կամ այն ոլորտում «մանիպուլյատոր է», որովհետև մշտապես զբաղված է նրանով, որ մանիպուլացնում է շրջապատին և միաժամանակ հաստատապես ընկած է իր և ուրիշների ցանցը»:

և հնարավորինս արդյունավետ դարձնելն է: Խոսքային մանիպուլ-յացիան ժամանակի ընթացքում ձևավորել է արդյունավետ ներգոր-ծության իր բառապաշարը, որի մեջ ինչպես հայերենում, այնպես էլ այլ լեզուներում կարևորագույն տեղ ունի **ոչինչ**-ը (ռուս.՝ **ничто**, անգլ.՝ **nothing**, գերմ.՝ **nichts** և այլն): Եվ դա՝ շնորհիվ այդ բառի դժվարբացատրելի բառիմաստի ու թերևս նույն պատճառով էլ՝ բազ-միմաստության: Հետաքրքիրն այն է, որ **ոչինչ** բառի բառիմաստային մեր նշած առանձնահատկություններով է պայմանավորված ոչ միայն լեզվական-մանիպուլյատիվ գործածության նրա հնարավորություն-նը, այլ նաև փիլիսոփայական-հասկացութային ընդգրկումն ու դրա մեկնաբանության բազմազանությունը:

1. **Ոչինչ** բառի բազմիմաստությունը

Ժամանակակից հայերենում **ոչինչ** բառի՝ առօրյա խոսքային գործածության մեջ հնարավոր բազմիմաստության սահմանները հեշտությամբ ճշտելի են բացատրական բառարաններով: Դրանք ընդհանուր առմամբ հանգում են իմաստային հետևյալ տարբերակ-ներին՝

1. անգոյություն, չգոյություն, անէություն,
2. ոչ մի բան, որևէ բանի բացակայություն, ոչնչություն,
3. որևէ, ոչ մի,
4. ինչ-որ խնդրի բացակայություն,
5. չնչին, աննշան, անկարևոր,
6. ունայն, սնոտի,
7. անպիտան, անարժեք,
8. քաղաքավարական արտահայտություն,
9. համակերպվել-հաշտվելու, զիջելու պատրաստակամություն և այլն[3]:

Գործնական կիրառության իմաստային այս բազմազանության մեջ դժվար չէ նկատելը, որ **ոչինչ** բառի բազմիմաստության շրջա-նակում են անվանելի, բնութագրելի ինչ-որ առարկայի, հատկանշի, իրողության, զգացողության բացակայությունն ու անորոշությունը:

---

3 Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հատ. 4, Եր., 1980, էջ 103, **Աղայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հատ. 2, Եր., 1976, էջ 1135, **Սուքիասյան Ա.**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., 1967, էջ 517:

Դա բառ է, որով կարելի է անվանել անգոն ու անիմանալին կամ անգո անիմանալին, ինչի պատճառով էլ այդ անիմանալի անգոն որևէ կերպ, որևէ կարգի որոշակիությամբ բնութագրելի-անվանելի չէ: **Իմաստային հենց այս առանձնահատկությամբ է, որ *ոչինչ* բառը մտավոր ու խոսքային մանիպուլյացիայի բազմազան հնարավորություններ է ընձեռում՝ նայած իր գործածության տեղին ու հանգամանքներին, նաև գործածողի ինտելեկտուալ, խոսքային կարողություններին ու նպատակին:**

Ոչինչ-ն իմաստային այդ առանձնահատկության շնորհիվ է ձևավորում միջանձնային փոխհարաբերություններում խոսքային որոշակի իրավիճակների համար սովորական դարձած հետևյալ իրողությունը: Մեր առօրյա-խոսակցական լեզվում հաճախ գործածվող և հայկական լեզվամտածողությանը բնորոշ դրսևորում է «**Ի՞նչ կա-չկա**» հարցման «**Բան չկա / Բան էլ չկա**» պատասխանը, որն այս դեպքում համարժեք է **ոչինչ** բառին: Հարց ամեն ինչի և որոշակի ոչնչի վերաբերյալ, որի պատասխանն էլ իրեն համարժեք է որոշակիությունից զուրկ, ընդհանրապես, իմիջիայլոց լինելով. «**Բան չկա / Բան էլ չկա / Հեչ / Ա՛հ, ընենց / Ըշտե / Ոչինչ**» և այլն:

Ոչինչ բառի խոսքային, հոգեբանական, փիլիսոփայական և այլ բնույթի մանիպուլյատիվ գործառույթը, ինչպես հայերենում, դրսևորվում է նաև այլ լեզուներում: Օրինակ՝ անգլերենում «**What's up?**» (Ի՞նչ կա-չկա) հարցի պատասխանը կարող է լինել «**Nothing much**», «**Nothing special**», «**Not a lot**» կամ պարզապես «**Nothing**»: Դրանք համարժեք են հայերենից վերը բերված շարքին՝ «**Բան չկա / Առանձնապես ոչինչ / Ոչինչ**»:

Ոչինչ-ի բառիմաստային ընդգրկման առանձնահատկությամբ է պայմանավորված նաև այն իրողությունը, որ դրա՝ որպես հասկացության վրա շատ մտավոր էներգիա է ծախսվել, նաև թուղթ ու թանաք ինչպես փիլիսոփայության, այնպես էլ աստվածաբանության մեջ: Բոլորովին էլ նպատակ չունենալով անդրադառնալու **ոչինչ** հասկացության փիլիսոփայական ու կրոնական մեկնաբանությունների պատմությանը՝ հնարավորինս համառոտ ներկայացնենք նրա ըմբռնման ամենաբնորոշ բնութագրերը: **Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ *ոչինչ* բառով կամ նրան հոմանիշ բառերով ձևավորվող խոսքային, հոգեբա-**

նական մանիպուլյացիաներում սովորաբար էական նշանակություն են ունենում փիլիսոփայորեն մանրելու, հիմարացնելու, քննարկվող խնդրից շեղելու և նման այլ հանգամանքներ:

Ոչինչ-ը կեցության, նրա հիմնարար սկզբունքների, օրինաչափությունների, համընդհանուր էության վերաբերյալ փիլիսոփայական գիտության՝ գոյաբանության առանցքային հասկացություններից է: Այն անվանում է առարկաների և երևույթների չգոյությունը, ընդհանրապես կեցության բացակայությունը: **Ոչնչի** ըմբռնման մեջ ամենախորհրդավորը թերևս այն է, որ ընկալվում է իբրև նույնքան իրական, գոյություն ունեցող, որքան որ, ասենք, ցանկացած իր: Լեզվական ձևակերպման առումով այն հետաքրքիր է այնքանով, որքանով որ անվանում է գոյություն չունեցողը՝ չգոյությունը: Այդ բառն ստեղծվել է, կա, գոյություն ունի չգոյությունն անվանելու համար: **Ոչինչն** ընկալվում է նաև որպես ցանկացած կեցության ելման կետ և ավարտ: **Ոչնչի**՝ չգոյության հակառակն **ամեն ինչն** է, որն էլ իր հնարավոր ընդգրկման անսահմանությամբ է նույնքան խորհրդավոր ու անմեկնելի:

Ոչինչը, կրոնական ըմբռնմամբ, տիեզերքի արարման նախանյութն է (Աստված **ոչնչից** է արարել **ամեն ինչ**): Որևէ հատկանիշից, որոշակիությունից զուրկ, անբնութագրելի-աննկարագրելի ու անիմանալի **ոչնչից** որոշակի ինչ-որ բան արարելու կարողությունը Արարչինն է: Հնդկական փիլիսոփայության մեջ ամրակայված է նիրվանայի հոգեֆիզիկական վիճակը, որը հնարավոր է, երբ կեցությունը փոխակերպվի **ոչնչի**: Ըստ այդ ընկալման՝ **ոչինչը**՝ որպես կեցության կերպ, մատչելի-հասանելի է միայն տրանսցենդենտ (անդրանցիկ) իրավիճակներում[4]: Ընդհանրապես **ոչնչի** բացարձակ իմաստը կեցության ժխտումն է: Դա չգոյությունն է: **Ոչնչի** գոյությունը որևէ ձևով հնարավոր չէ փորձով ապացուցել: Հակառակ դեպքում դա (գտնվածը) չի լինի **ոչինչ**, այլ կլինի ինչ-որ բան: **Ոչնչի** վերաբերյալ հնարավոր է անել միայն վերացական բնույթի տրամաբանական դիտարկումներ՝ փորձելով այդ կերպ գոնե զուտ երևակայությամբ հասկանալ նրա էությունը: Իսկ դա կարող է հեշտությամբ հանգել խոսքային-աբստրակտ, անապացուցելի ու անառարկելի, անգամ

4 Տե՛ս «Философский энциклопедический словарь», ред. **Л. Ф. Ильичев и др**., М., 1983, էջ 437-438, 693-694, «Словарь иностранных слов», ред. **А. Г. Спиркин**, М., 1987, էջ 504:

սպեկուլյատիվ պնդումների, որից նրա էությունն ավելի չի բացահայտվի:

Ինչևէ, տվյալ դեպքում, երբ մեր նպատակը **ոչինչ** բառի խոսքային-մանիպուլյատիվ գործածությանն է վերաբերում, տեղին չի լինի խնդիրը ծավալել մինչև փիլիսոփայական ու կրոնական ուսմունքներում նրա իմաստավորման տարբերակների դիտարկումը, ինչը կարող է հասնել միչև Մ. Շտիրների անհատապաշտական անարխիզմի բովանդակությանը (նա հետևողականորեն պնդում է, որ իր գործը կառուցում է **ոչնչի** վրա[5]) և դրանով էլ չավարտվել: Միայն հավելենք հետևյալը. նախ՝ ***ոչինչ*** **բառի մանիպուլյատիվ գործածության մեր դիտարկումները ցույց են տալիս, որ, ինչպես արդեն ասել ենք, այն միայն բացասական իմաստով կամ նպատակով չէ, որ օգտագործվում է, և երկրորդ՝ այդ բառին խոսքի մեջ հաճախ փոխարինում են կա՛մ իր իմաստային համարժեքները (հոմանիշները), որոնք թվարկել ենք, կա՛մ էլ համարժեք իմաստային ձևակերպումները՝ այլ բառերով: Հետևաբար** ***ոչինչ*** **բառի խոսքային մանիպուլյատիվ կիրառության շրջանակներում դիտարկելի են նաև այդ դեպքերը: Օրօրինակ. «.... անանկ բանի մը կը նմաներ, որուն նմանը չկա»**[6]:

Խոսքային մանիպուլյացիայի կիրառության ինքնատիպ դրսևորումներից է Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» (1880) վիպակը: Երգիծանքի մեջ նրա անկրկնելի տաղանդի, ստեղծագործության ոճական առանձնահատկությունների և մասնավորաբար այդ վիպակի վերաբերյալ շատ է գրվել[7]: Այդ ստեղծագործությունից առանձնացնենք Դ դրվագը, որում երգիծաբանը ներկայացնում է Աբիսողոմ աղայի հերթական անկոչ այցելուին՝ բանաստեղծին: Դրվագի սկզբում Հ. Պարոնյանը տալիս է այս «մեծապատիվ մուրացկանի» արտաքինի ու ներքին էության նկարագիրը: Միանգամից ասենք, որ հինգ նախադասությունից կազմված այդ պարբերության մեջ բանաստեղծի ներքին էության բնութագիրն ընդամենն այսքանն է. «.... անանկ բանի մը կը նմաներ, որուն նմանը չկա»: Սա այդ պարբերության առաջին նախադասության վերջին հատվածն է:

5 Տե՛ս **Штирнер М.**, Единственный и его собственность, М., 2021, էջ 478:
6 **Պարոնյան Հ.**, Երկեր, Եր., 1969, էջ 242:
7 Տե՛ս **Մակարյան Ա.**, Կրկին Պարոնյանի հետ, Եր., 2018, էջ 243-259:

Հ. Պարոնյանն այդ երիտասարդի արտաքինի նկարագիրը ձևավորում է իրար հակադիր երկու բնութագրերով: Առաջինում թվարկում է մի խումբ մասնագիտություններ (վաճառական, սեղանավոր, արհեստավոր, գործավոր), որոնց ներկայացուցիչներին նման չէ իր այդ հերոսը: Երկրորդը նրա տարիքի, դեմքի, աչքերի, մազերի, հագուկապի մանրամասն նկարագրությունն է: Այստեղ հերոսի նկարագրին վերաբերող անորոշություն չի մնում ընթերցողի համար: Հեղինակի մտահղացած ինտրիգը կամ խոսքային մանիպուլյացիան հերոսի էությանը վերաբերող բնութագիրն է: Ըստ դրա՝ որպես բանաստեղծ ներկայացած այդ արկածախնդիր մանիպուլյատորը չունի ներքին էության դրականորեն բնութագրելի որոշակիություն, իսկ ունեցածն էլ որևէ կերպ բնութագրելի կամ անվանելի չէ:

Նշանակալի է, որ Հ. Պարոնյանը բանաստեղծի էությունը չի ներկայացնում բացասական իմաստով որևէ բառ գործածելով: Դրա փոխարեն նա ստեղծում է անակնկալ լեզվական-տրամաբանական ինտրիգ՝ ըստ ընթերցողի երևակայության չափ ու սահմանի ճանաչելի դարձնելու նրա որքան ծիծաղելի, նույնքան էլ մերժելի էությունը: **Իսկ ուշադիր ընթերցողի համար բոլորովին էլ դժվար չէ գլխի ընկնելը, որ հեղինակային խոսքով չորոշակիացած նրա նկարագիրը համարժեք է *ոչինչ* բառի իմաստային ընդգրկման շրջանակին՝ «չնչին, անէություն, ոչնչություն, որևէ բանի բացակայություն» և այլն: Սխալ չհասկացվելու համար այստեղ մեկ անգամ ևս ընդգծենք, որ խոսքը հերոսի ոչ թե ընդհանրապես էութենազուրկ լինելու, այլ դրականորեն գնահատելի ներքին որակի մասին է: Մի բան, որի ապացույցն է վիպակի ամբողջ Դ դրվագը, որում հեղինակը վարպետ երգիծաբանի տաղանդով բացահայտում է հմուտ մանիպուլյատորի նրա մարդկային ցածր տեսակը:**

Աբիսողոմ աղային որպես բանաստեղծ ներկայացածի այդպիսի նկարագրի ու վարքագծի արդյունավետությունը զգալիորեն պայմանավորված է, իհարկե, նաև դիմացինի տգիտությամբ: Սակայն բոլոր դեպքերում նա **ոչինչ** է:

Ինչպես արդեն ասել ենք, խոսքային մանիպուլյացիան կարող է ունենալ նաև մտքի անսպասելի, խորհրդավոր-փիլիսոփայական դրսևորում՝ դառնալով պարադոքս: Հ. Պարոնյանի

բնութագիրը («.... անանկ բանի մը կը նմաներ, որուն նմանը չկա») այս առումով գյուտ է: Նման տրամաբանական գյուտերի (պարադոքս) խոսքային մանիպուլյատիվ դրսևորումները բնորոշ են ինքնատիպ մտածողներին: Նման օրինակներ հայտնի են դեռևս շատ վաղուց, ինչպես Սոկրատեսին վերագրվող «Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ»[8] ասույթը:

Նշենք, որ փիլիսոփայական միտքը հազարամյակների ընթացքում բազմաթիվ պարադոքսներ է կուտակել: Տրամաբանական այդպիսի գյուտերը հաճախ դժվարըմբռնելի, բայց լավագույն բնորոշումներից են՝ ասված տիեզերքի, կեցության, մարդու և այլ բաների վերաբերյալ: Այդպիսի գյուտերը բնորոշ են նաև Հովհ. Թումանյանի խորաթափանց մտքին: Ահա մի քանի օրինակ.

Աշխարհում հաստատ մի բան կա մենակ,
Այն է, որ հաստատ ոչ մի բան չկա[9]:

Բարձր է հընոց աշխարհքն Հայոց ու Մասիսը երկնադետ.
Իմ խոր հոգին էն բարձունքին խոսք է բացել Նըրա հետ –
Անհաս բանից, ըսկզբանից, երբ չըկան էլ դեռ չըկար,
Մինչև վախճանն անվախճանի քընընում է դարե դար[10]:

Ոգեղեն խրախճանքի հանճարի մտքի թռիչքի լեզվական ձևակերպումները («երբ չըկան էլ դեռ չըկար», «մինչև վախճանն անվախճանի») պարադոքսալ-փիլիսոփայական մանիպուլյացիոն խոսքի միանգամայն յուրօրինակ դրսևորումներ են, որոնց բովանդակությունն անհաս է ամենազոր երևակայությանն անգամ:

Արդեն ասել ենք, որ մանիպուլյացիան ընդհանրապես, որի տարբերակներից է խոսքայինը, միշտ չէ, որ բացասական, մերժելի նպատակադրմամբ է գործադրվում: Նույնը նաև **ոչինչ** բառի կամ նրա իմաստային համարժեքների գործածության դեպքերում: Նրանք յուրահատուկ են նաև նրանով, որ իրենց իմաստային ընդգրկումներով անիմանալիի և անվերծանելի-անմեկնելիի տիրույթներ տեղա-

8 Նաև Դեմոկրիտեսին վերագրվող այս պարադոքսը հայտնի է այլ տարբերակներով ևս՝ «Ես գիտեմ միայն, որ ոչինչ չգիտեմ», «Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ, բայց ուրիշները դա էլ չգիտեն» և այլն:
9 **Թումանյան Հ.**, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, Եր., 2018, էջ 154:
10 Նույն տեղում, էջ 56:

փոխելու անչափելի ներունակություն ունեն, ինչի դրսևորումներից է նաև Հովհ. Թումանյանից բերված օրինակը:

Միջմարդկային հարաբերությունների իրավիճակների, դրանցում տրամաբանական գյուտերի ու հոգեբանական-վարքագծային դրսևորումների հետաքրքիր իրողություններ են խոսքային մանիպուլյացիայի այն դեպքերը, որոնք ձևավորվում են հենց **ոչինչ** բառի գործածությամբ: Դրանց համար տիպական կարող է լինել Ավ. Իսահակյանի «Այդ ոչինչը ես եմ» (1939) արևելյան հին ու հայտնի առակը[11]:

2. «Այդ ոչինչը ես եմ»

Ավ. Իսահակյանի գրառած ժողբանահյուսական այս ստեղծագործությունը կառուցված է կենսական հակադիր արժեհամակարգերի հանդիպադրման, ավելի ճիշտ՝ հակադրման սկզբունքով և մանիպուլյատիվ մի քանի իրավիճակների հիման վրա: Հերթականությամբ անդրադառնանք և՛ այդ արժեհամակարգերին, և՛ մանիպուլյացիայի դրսևորումներին:

Հակադրված արժեհամակարգերից մեկի կրողն արևելյան մի բնակավայրի քաղաքապետ-իշխանն է: Նա համակեցական ավանդական հիերարխիկ կառույցում որոշակի տեղի ու դերի մարմնավորում է: Դրանով էլ պայմանավորված է նրա սոցիալական նշանակալիությունն իրենից ներքև գտնվողների համար: Դրա համար էլ պատահական չէ, որ երբ նա անցնում էր փողոցով, «մարդիկ ոտի էին կանգնում, կպչում պատերին և խոնարհ գլուխ տալիս»[12]: Բայց նա գիտի նաև, թե որն է իր պարտավորությունների ու ազատությունների անշրջանցելի պատնեշը: Ահա թե ինչու իրեն թույլատրվածի հստակ գիտակցումով անմիջապես լրջանում է, երբ դերվիշը հարց ու պատասխանի սկզբունքով նրան բերում-հասցնում է փոխարքայից վեր հաջորդ պաշտոնին նույնիսկ տեսականորեն հավակնելու նրա հեռանկարին: Քաղաքապետ-իշխանի հակադարձումը չի ուշանում. «– Սահմանը սա է: Մեր բոլորի վրա շահը կա, նա է

11 Հեղինակի ինքնագրում այս ստեղծագործությունն ունի «Արևելյան զրույց» ենթավերնագիրը (տե՛ս **Իսահակյան Ավ.**, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 5, Եր., 2014, էջ 943):
12 Նույն տեղում, էջ 270:

ամենից մեծը»[13]: Նրա պատասխանն իր տեղը, իրեն թույլատրվածը, իր համար հնարավորը հստակ գիտակցողի խոսք է:

Ավ. Իսահակյանի տեքստից ակնհայտ է, որ այդ քաղաքապետը երկրային-կենսաբանական կեցության ու պահանջմունքների մարդ է և գոհ այն իրականությունից, որում ապրում է: Համենայնդեպս, հեղինակային որևէ ակնարկից չի նշմարվում, որ նրան մտահոգում են մարդու կեցության, կյանքի իմաստի ու նման այլ խնդիրներ, որոնց վերաբերյալ մտորումները կարող են հանգել *ոչինչ*-ի բազմիմաստության որևէ տարբերակի: Այլ կերպ ասած՝ նրա համար կյանքն իմաստավորված է ֆիզիկական գոյության տարբերակով, և ինքն էլ դուրս է կյանքի վերաբերյալ փիլիսոփայական խոհ ու մտորումի լաբիրինթոսից:

Քաղաքապետի ազատությունը համակեցական հիերարխիայում իր տեղի ու գործառույթների գիտակցման մեջ է, որի հետ ինքը հակասության մեջ չէ: Դա իրական և ոչ թե երևակայական ազատություն է: Աշխարհի կարգն ու դրվածքը և դրանով պայմանավորված միջմարդկային հարաբերությունները, որոնց մեջ է նաև ինքը, նա ընդունում է որպես օրինաչափություն և ազատ է հենց դրանով: Բայց նաև կաշկանդված է այդ ամենով, ինչի հիման վրա նրա կենսակերպը կարելի է բնորոշել նաև իբրև առանց շղթաների ստրուկի կարգավիճակ: Պարզ է, որ դա պայմանավորված է այդ կենսակերպը գնահատողի մոտեցումներով: Դրա համար էլ դերվիշի աչքում նա ստրուկ է, թեև իրավաբանորեն ստրկացված կամ ընդհանրապես իրավազուրկ չէ:

Առավել հետաքրքիր ու միանգամայն այլ են այդ նույն իրականության մեջ գոյատևող ծերունի դերվիշի կենսական հանգամանքները: Դրա անմիջական ցուցիչը նրա դերվիշ լինելն է: Այսինքն՝ մուսուլման թափառական, ասկետ կրոնավոր, որը միստիկ սուֆիստ է: Նա իսլամ քարոզելու հետ իր կյանքի գերխնդիրն է համարում ապաշխարանքով, ճգնակեցությամբ ու բարեպաշտությամբ հասնել ինքնամաքրման մի մակարդակի, որի դեպքում հնարավոր կլինի աստծո հետ վերամիավորումը: Երկրային, ֆիզիկական կեցության բավականությունները, արժեքները, անգամ պայմանականությունները նրա համար **ոչինչ** են: Դրա համար էլ պատահական չէ այդ

13 Նույն տեղում:

ամենի նկատմամբ նրա արհամարհական, անգամ անհարգալից վե-
րաբերմունքը: Նա ունի իրենից մեծի, բարձրի վերաբերյալ իր հա-
մոզմունքը, ինչի պատճառով էլ, հակառակ մյուսների համար ան-
խախտ համակեցական նորմի, չի հնազանդվում ոտքի կանգնելու, ճանապարհին ազատելու և քաղաքապետի առաջ խոնարհվելու վեր-
ջինիս շքախմբի առաջնորդի պահանջին: Ընդ որում, նրա համար դա կենսակերպի ու մտածողության այնպիսի որակ է, որը դրսևոր-
վում է անգամ մանրուքներում: Նա այնքան է արհամարհում երկ-
րային կեցության պայմանականությունները, որ ամառվա շոգին պատի ստվերում արևից պատսպարվելիս պառկում է մայթի ոչ թե երկայնքով, այլ լայնքով: Սա ազատ կենսակերպի վերաբերյալ նրա աշխարհայացքի ու դրան համապատասխան վարքագծի դրսևո-
րումն է: **Սակայն այն պայմանականորեն ու հարաբերականորեն է անկախ արտաքին, ֆիզիկական աշխարհից և ազատության այն տարբերակն է, որն ընդունված է բնորոշել որպես ներքին ազատություն: Դա պայմանական ու հարաբերական ազատու-
թյուն է թեկուզև այնքանով, որքանով որ դերվիշը ֆիզիկապես կա ու գոյություն ունի առարկայական այն աշխարհում ու մարդ-
կային այն համակեցության մեջ, որոնցից ինքն աշխատում է ազատվել գոնե անտեսել-արհամարհելու տարբերակով: Նրա հանգրվան-ապաստարանն իր ներքին-հոգևոր ոլորտն է:**

Դերվիշի աշխարհայացքը և գոյությունն իմաստավորող վար-
քագիծն այս կամ այն տարբերակով դրսևորվել են ոչ միայն իսլա-
մում, այլ նաև կրոնական ուրիշ ուսմունքներում: Սակայն այս դեպ-
քում առավել կարևոր է այն, որ մարդու կեցության իմաստի նրա այդ ընկալումն զգալի աղերսներ ունի նաև ինդիվիդուալ անար-
խիզմի փիլիսոփայության հետ: Օրինակ, ըստ **Մ. Շտիրների**, միայն համակեցական ամեն ինչից ազատվելով է հնարավոր ձեռք բերել ինքնուրույնություն ու ազատություն, հասնել սեփական ինքնության կայացմանը: Մասնավորաբար, քանի որ ցանկացած իրավունք ուրիշների մտածածն ու ներդրածն է մարդկանց կեցության մեջ ու պարտադրանք է մյուսներին, հետևաբար միայն յուրաքանչյուրը առանձին վերցրած կարող է իր ճիշտ կամ սխալ լինելը որոշել: Դրանից ելնելով՝ Մ. Շտիրները հայտարարում է, որ իրենից դուրս չկա ոչ մի օրենք: Հետևաբար ազատ են նրանք, ովքեր վեր են օրեն-

քից, իսկ նրանց ազատության սահմանն ընդարձակ է այնքան, որքան որ յուրաքանչյուրը կարող է ձեռք բերել իր ինքնատիպությամբ և ինքնազարգացումով[14]:

Այլոց ձևավորած համակեցական դրվածքների շտիրներական հախուռն մերժման նպատակը սեփական ինքնության հայտնաբերման ձգտումն է և յուրաքանչյուրի ազատության իրավունքի հաստատումը: Թե որքանով է դա հնարավոր և իրագործելի առաջարկվող տարբերակով, այլ հարց է: **Բայց չպիտի անտեսել մարդկության կենսափորձը, որը բազմիցս հաստատել է, որ, ազատվելով ինչ-որ բանից, անխուսափելիորեն ձեռք ես բերում այլ կարգի կախումներ, հայտնվում այլ կարգի դրվածքների ու պայմանականությունների տիրույթում: Հետևաբար դերվիշի կենսակերպն ու աշխարհայացքը ևս իլյուզիա են, ինքնախաբեություն կամ մտային ինքնամանիպուլյացիա, որովհետև, ինչպես արդեն ասել ենք, հնարավոր չէ ֆիզիկապես գոյություն ունենալ ու ընդհանրապես դուրս լինել կոնկրետ ժամանակի ու տարածության երկրային իրականությունից, կենսական դրվածքներից:**

Ասենք նաև, որ, այլոց ձևավորած համակեցական իրականությանը բնորոշի մերժման ընդհանրություններով հանդերձ, դերվիշի և ինդիվիդուալ անարխիզմի գաղափարախոսություններում կա էական տարբերություն: Վերջինի մերժումը չի հասնում ընդհանրապես երկրայինի, մարմնավորի մերժմանը: Նրա նպատակն այդ ամենի իր համար ընդունելի տարբերակի հաստատումն է:

Ընդհանրապես պիտի նկատի ունենալ, որ մարդու ազատության հարցը չարչրկվելու աստիճան շատ է քննարկվել ու քննարկվում է նաև մեր ժամանակներում: Դժվար է ասել, թե գործնական կյանքում իրականացվածության առումով որքանով կարելի է ազատության ձգտման մարդկային փորձը հաջողված ու հնարավոր համարել: Օրինակ՝ **Է. Ֆրոմը**, ի մի բերելով այդ փորձը, մարդու ազատագրման վերաբերյալ եղած գաղափարները բաժանել է երկու խմբի՝ գաղափարներ, որոնք նպատակաուղղված են մարդու արտաքին ազատագրմանը, և գաղափարներ, որոնք նպատակաուղղված են մարդու ներքին ազատագրմանը: Նա ընդգծում է, որ Նոր և Նորագույն ժամանակներում մարդու ազատագրումը դիտարկվել է գլխա-

14 Տե՛ս **Штирнер М.**, նշվ. աշխ., էջ 201–233:

վորապես որպես ազատագրում արտաքին ուժերից (շահագործվող դասակարգեր, ստրկացված ժողովուրդներ և այլն)։ Դա, ըստ էության, քաղաքական կամ տնտեսական ազատագրման խնդիրն է։ Եվ նա դրա դրսևորումն է համարում **Կ. Մարքսի** գաղափարախոսությունը։

Է. Ֆրոմը միաժամանակ ընդգծում է, որ մարդու քաղաքական ազատագրումը լիարժեք ազատագրում չէ, որովհետև մանավանդ Նորագույն ժամանակներում ձևավորվել ու ակտիվորեն գործում են մարդուն կապանքների մեջ պահող բազմաթիվ այլ՝ թաքուն միջոցներ։ Եվ հենց այդ պատճառով էլ դրանք դժվարնկատելի ու դժվարըմբռնելի են մանավանդ շարքային մարդու համար։ Հետևաբար այդ տիպի անազատությունից ազատագրվելն էլ ավելի դժվար է։ Այս առումով նա կարևորում է հատկապես **Զ. Ֆրոյդի** գործունեությունը, ով մարդու ներքին ես-ը, նրա ներքին ազատագրման խնդիրը դարձրեց գիտական ուսումնասիրության օբյեկտ։ Զ. Ֆրոյդը հավատում էր, որ մարդու գիտակցականի և անգիտակցականի միջև առկա թաքուն բախումները հասկանալը հնարավոր կդարձնի նևրոզների բուժումը։ Իսկ **Կ. Մարքսն** էլ հավատում էր, որ իր գտած ճշմարտությունն ասելով կարող է մարդուն ազատագրել իլյուզիաներից[15]։

Այս ամենն ի մի բերելով՝ **Է. Ֆրոմը** պնդում է, որ մարդու ներքին ազատությունը կարող է նրան ազատագրել ագահության և իլյուզիաների կապանքներից։ Իսկ դա մի նոր հնարավորություն է մարդու գիտակցության, քննադատական-վերլուծական մտածողության արդյունավետ զարգացման համար, որը կհասցնի իրականության ճշմարիտ ճանաչողությանը։ Այդպիսի կենսակերպ ստեղծած մարդը, ըստ նրա, կազատագրվի նաև իր ոչ ողջախոհ կրքերին գերի դառնալուց։

Հարկ է նշել, որ Է. Ֆրոմի այս պնդումների աղբյուրը մարդու համար ցանկալի կեցության վերաբերյալ իր հետևյալ համոզմունքն է. «Единственной реальной целью является полное освобождение – цель, которую вполне можно назвать *радикальным /или революционным/ гуманизмом*»[16]։

15 Տե՛ս **Фромм Э.**, Искусство быть, М., 2022, էջ 13-77։

16 Նույն տեղում, էջ 15։

Հատկանշական ու կարևոր է նշել, որ մարդու ազատությանը վերաբերող հիմնախնդրի քննարկման մեջ է. Ֆրոմը կարևորում է հատկապես արդի իրականությանը բնորոշ անցանկալի մի իրողություն ևս: **Նա ցույց է տալիս, որ, չնայած արդի գիտատեխնիկական զարգացման մակարդակին ու արագությանը, անցյալի համեմատ էականորեն նվազել է միջին մարդու մտավոր-ստեղծագործական գործունեության ծանրաբեռնվածությունը**: Մտավոր ակտիվությունը դարձել է փոքրաթիվ պրոֆեսիոնալների գործունեության ոլորտը: Իսկ մեծամասնությունը, պատրաստի ստանալով իրեն անհրաժեշտ ամեն ինչ, օրավուր խորթանում է մարդու համար առաջնային անհրաժեշտություն մտավոր գործունեությունից ու դեգրադացվում[17]:

Ընդհանուր առմամբ համամիտ լինելով ազատության և անազատության հիմնախնդիրների վերաբերյալ Է. Ֆրոմի գաղափարներին՝ նշենք նաև հետևյալը: Մեր կարծիքով՝ մարդու ազատագրության երկու լրջագույն ոլորտների (քաղաքական և ներքին) վերաբերյալ նրա դիտարկումները հարկ է լրացնել մի կարևոր իրողությամբ ևս: Հարցն այն է, որ մարդու ու նրա կենսական խնդիրների շուրջ ցանկացած քննարկման ժամանակ չպիտի անտեսել նրա կենսաբանական էությունը կամ այլ կերպ ասած՝ կենդանական ծագումն ու նախասկիզբը: **Դա ակնհայտորեն ցույց կտա, որ մարդու թե՛ արտաքին, թե՛ ներքին բախումների պատճառը հենց իր կենդանական նախասկզբի և գիտակցության հակասությունների մեջ է: Դա էլ պայմանավորում է մարդու նկարագիրն ու վարքագիծը, անազատությունների անլուծելի խնդրի առկայությունը: Ընդ որում, հարկ է չանտեսել, որ մարդու գիտակցական ներուժը ոչ միայն այնքան զորավոր չէ, որ հնազանդ պահի կենդանական նախասկզբին բնորոշ մոտիվացիաները, այլև անգամ հակառակը՝ շատ հաճախ նրա ինտելեկտուալ կարողությունն է գործիք դառնում կենդանական մղումների ու պահանջմունքների ձեռքում: Իսկ այդ իրողությունը մարդուն և նրան վերաբերող ամեն ինչ**

Թարգմանությունը՝ ըստ բովանդակության. «Միակ իրական նպատակը լիարժեք ազատագրումն է, նպատակ, որը միանգամայն հնարավոր է անվանել *արմատական /կամ հեղափոխական/ հումանիզմ*»:

17 Տե՛ս նույն տեղում, էջ 171–175:

դարձնում է ավելի խնդրահարույց[18]: Հետևաբար իր վարքագիծը կանխորոշող կենսաբանական (կենդանական-նախասկզբնական) գործոնից մարդու ազատագրվելու անհրաժեշտությունը, կարծում ենք, միշտ էլ եղել ու մնալու է նույնքան հրատապ, որքան քաղաքական (տնտեսական) և ներքին ազատագրմանը:

Ինչևէ, վերադառնալով Ավ. Իսահակյանի ստեղծագործությանը, նշենք, որ խոսքային մանիպուլյացիայի դասական օրինակ է դերվիշի և քաղաքապետի երկխոսությունը: Դրա նախաձեռնողը դերվիշն է, ով քաղաքապետին հմտորեն ներքաշում է իր հետաքրքրությունների, մտքերի նյութ հարցերի քննարկման մեջ, որոնք շատ հնարավոր է, որ երբևէ լրջորեն չեն էլ զբաղեցրել քաղաքապետին: Դերվիշը հարցեր տալու միջոցով և հենց զրուցակցի պատասխաններով ու մասնակցությամբ ճշմարտություններ է «պարտադրում» նրան: Սա արդյունավետ ու էվրիստիկ զրույցի սոկրատյան հայտնի մեթոդն է: Իսկ նպատակը մեկն է, որ քաղաքապետը հասկանա, թե ով է իր զրուցակից դերվիշը, որն է կեցության ու կյանքի նրա ու իր ընկալումների տարբերությունը.

« – Ասենք թե՝ շահ դարձար, հետո՞,– հարցնում է դերվիշը:

– Հետո՝ ոչինչ,– պատասխանում է քաղաքապետը:

– Ահա՛ այդ ոչինչը ես եմ: Ոտքերիս տակից անցի՛ր, գնա քո ճանապարհը,– նույն անվրդովությամբ պատասխանում է դերվիշը և նվաղուն աչքերը գոցում»[19]:

Նրանց երկխոսությունից միանգամայն պարզ է, որ դերվիշը քաղաքապետից շատ ավելի խելոք է ու հնարամիտ, հմուտ աբստրակտ խնդիրների քննարկման մեջ: Ակնհայտ է նաև այն, որ իր մտքին անհաս հարցերի քննարկման մեջ ներքաշված քաղաքապետը պիտի մնար կաշկանդված, անօգնական ու հիմարացված: Մեկը, որի հետ դերվիշը գլուխ դնելու, երկար-բարակ զրուցելու, նրա մտքին անհասը բացատրելու ցանկություն չունի: Հարկ է նշել նաև, որ քաղաքապետի ու դերվիշի այդ կարճատև շփման ընթացքում ակնհայտո-

18 Այս հիմնախնդրի վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս **Աղաջանյան Ս.**, Մշակույթի տեսություն, Եր., 2021, էջ 36-46 կամ **Աղաջանյան Ս.**, Բանականության ֆենոմենը և հարակից հարցեր, «Լրատու» պարբերական, Ստեփանակերտ, 2013, N 2, էջ 16-23:

19 **Իսահակյան Ավ.**, նշվ. աշխ., էջ 271:

րեն դրսևորվում են վերջինիս հոգեվիճակը, տրամադրությունը, վերաբերմունքը զրուցակցի նկատմամբ, ինչում կարևոր նշանակություն ունի նաև **ոչինչ** բառը:

Այս դրվագում ևս ակնհայտ է մանիպուլյացիան, որը վերաբերում է կենսակերպին: Ամբողջ խնդիրն այն է, որ այդ երկու մարդիկ սկզբունքորեն հակադիր կենսակերպերի, կյանքի իմաստի ծայրահեղ, անգամ իրարամերժ սկզբունքների կրողներ են: Քաղաքապետին անհաս է դերվիշի հոգեմտավոր հետաքրքրությունների ոլորտը: Բայց չպիտի անտեսել նաև, որ դերվիշն էլ իր հերթին մերժում է մի կենսակերպ ու իրականություն (քաղաքապետինը), որի վերաբերյալ ունի միայն հայեցողական փորձ ու իմացություն: Առակի տեքստից չի երևում, որ նա եղել է կյանքի տերերի շարքում, ապրել այդպիսի կյանքի քաղցրություններն ու դառնությունները: Բայց ժխտում է այդ իրականությունն ու կենսակերպը՝ ակամա հիշեցնելով Եզոպոսի հայտնի առակի աղվեսի վարքագիծն ու գնահատականը: Տեսականորեն չի կարելի բացառել, որ դերվիշի «դունչը» ևս երբևէ կարող էր և հասած չլինել խաղողին: Հետևաբար չպիտի անտեսել, որ իրեն անհասը թերագնահատելն ու մերժելը մարդուն բնորոշ ինքնապաշտպանական վարքագիծ է: Եվ հակառակը:

Ահա այսպես այդ սակավաբառ, կարճատև ու արագընթաց զրույցը դերվիշը հանգեցնում է իր ուզած արդյունքին («Ահա՛ այդ ոչինչը ես եմ»), որն անհասանելի է քաղաքապետի մտքին: Թեև ուղղակի չի ասվում, բայց ինքնըստինքյան հասկանալի է, որ դերվիշը նկատի ունի երկրային ամեն ինչից ու ամենքից բարձր մեկին, որը միայն երկնավորը (աստված) կարող է լինել: Բայց հանգիստ թողնենք աստծո խնդիրն ու անդրադառնանք նրա օգտագործած բառին, որն է **ոչինչ**-ը: Այստեղ ևս առկա է մանիպուլյացիա, որովհետև ակնհայտորեն շահագործված է ***ոչինչ*** **բառի իմաստի անորոշությունը կամ բազմաշերտությունը: Խնդիրն այն է, որ դերվիշը որքան էլ համոզված լիներ այդ բառի իր ըմբռնման մեջ, միևնույն է, որևէ ձևով չէր կարող ապացուցել դրա ճշմարտացիությունը: Հետևաբար դա մանիպուլյատիվ իլյուզիա է: Ճիշտ նույն կերպ էլ որևէ մեկը չի կարող ապացուցել *ոչնչի* նրա ըմբռնման սխալականությունը: Միայն թե նա հմտորեն օգտվում է այդ անճանաչելին, անիմանալին ու անբացատրելին փաստար-**

կելով քաղաքապետին մանիպուլացնել-հիմարացնելու հնարավո-րությունից: Իսկ մանիպուլացնելով նրան ու մնալով անպատաս-խան՝ գլուխն ազատում է գործող կարգ ու դրվածքի և իրավասու պաշտոնյայի առաջ պատասխանատու լինելուց:

Առակս զի՞նչ կցուցանե

Ոչինչ բառի բազմիմաստությունը և այդ իմաստների անորոշու-թյունը հնարավորություն են տալիս դրանով գործառողին ստեղծելու խոսքային մանիպուլյացիայի իրավիճակներ: Դրանք հաճախ դառնում են ինքնատիպ, ոչ ստանդարտ մտքեր արտահայտելու միջոցներ: Դրա լավագույն դրսևորումներից մեկը գրականությունից հայտնի, ամե-նայն հավանականությամբ ժողբանահյուսական ծագում ունեցող և Ավ. Իսահակյանի գրառած «Այդ ոչինչը ես եմ» առակն է: Ինչպես այս ժանրի բոլոր գործերը, սա ևս ունի իր բարոյախոսական-խրատական բաղկացուցիչը: Ո՞րն է այն:

Ըստ այդ առակի տեքստի՝ հակադրվել են մարդկային երկու հնարավոր կենսակերպեր՝ քաղաքապետինը և դերվիշինը: Դրա վե-րաբերյալ արդեն ասվել է: Ինչ վերաբերում է առակի խրատական բո-վանդակությանը, ապա տեքստից ակնհայտ է, որ այն նաև հեղինա-կի գաղափարախոսությունն է: Հեղինակն աշխատում է ընթերցողին համոզել, որ իր ներկայացրած երկու կենսակերպերից ու դրանք խորհրդանշող կերպարներին բնութագրող արժեհամակարգերից նա-խընտրելի է դերվիշինը: Մարդ, ով ձևավորել է իր ներքին՝ հոգեմտա-վոր ազատության սոցիալական դրական նշանակալիության արժեհա-մակարգը, որն էականորեն տարբեր է զուտ կենսաբանական պա-հանջմունքների շրջանակներում լինել-ապրելու պետական պաշտոն-յայի՝ քաղաքապետի խորհրդանշածից: Առաջինն ինտելեկտուալ է, ինք-նատիպ իր գոյության իմաստի, իր ինքնահաստատման ձևի մեջ, երկ-րորդը՝ համակեցական շաբլոնի մեջ իր տեղն ունեցող ֆունկցիոներ:

Այս ամենով հանդերձ՝ պետք է նկատի ունենալ մտքի մանի-պուլյացիայի մեկ այլ դրսևորում ևս, որի մեջ ընթերցողին արդեն տեքստի հեղինակն է ներքաշում իր պատումով, ստեղծած կեր-պարներով: Դա հետևյալն է. նրա հերոսները մարմնավորում են ծայրահեղորեն հակադիր, իրարամերժ կենսորոշումներ և կեն-

սակերպեր: Ներկայացված կոնկրետ իրավիճակում, ինչպես ար- դեն ասվեց, մարդու նախընտրելի տեսակ է ներաշխարհային հարստությամբ առանձնացող դերվիշը: Հեղինակը մտահղացել կամ օգտագործել է ժողովրդական-բանահյուսական այնպիսի կոնֆլիկտ, որի դեպքում այդ երկուսից կամա-ակամա ավելի համակրելի ու նա- խընտրելի է դառնում դերվիշը: Եվ մեր նշած հեղինակային մանի- պուլյացիան հենց այդ կոնֆլիկտով ձևավորված կենսական իրավի- ճակի մեջ է, որովհետև նրա վերաբերյալ պատումը լսողի կամ ընթեր- ցողի համար այլընտրանք չի թողնում:

Մարդկության մշակութաստեղծ փորձից, սակայն, հայտնի են կյանքի իմաստավորման, կենսակերպի ընտրության նաև այլ տարբե- րակներ, որոնց բնորոշը ծայրահեղ, իրարամերժ սկզբունքների հա- կադրությունը չէ: Այդ տարբերակները զերծ են մտքի ու խոսքի մանի- պուլյացիայից, և դրանց ստեղծման սկզբունքը հնարավոր կենսակեր- պերի ողջախոհ համադրությամբ մեկ ուրիշի ձևավորումն է: Օրինակ՝ անտիկ հունական մշակույթից հայտնի ասույթը՝ «առողջ հոգի առողջ մարմնի մեջ»: Ե՛վ մարմնի, և՛ հոգու պահանջմունքները չափավորու- թյամբ ու ներդաշնակելով բավարարելու մեկ այլ ասույթ էլ հայտնի է քրիստոնեական մշակույթում. «Ոչ միայն հացիւ կեցցե մարդ, այլև ամենայն բանիւ, որ ելանե ի բերանո Աստծոյ»[20]:

Երկու դեպքում էլ մարդու ֆիզիկական լիարժեք գոյությունը կարևորվում է որպես անհրաժեշտություն, որովհետև ոչ լիարժեք կենսաբանական կեցությունը պատճառ է դառնում նաև հոգե- մտավոր անլիարժեքության: Բայց դրա հետ էլ համարժեքորեն կարևորվում է մարդու նաև մտավոր ակտիվությունը, առանց որի նա չի կարող ձևավորել այլ արարածներից իրեն տարբերող կեն- սակերպ ու արժեքների համակարգ:

Մարդկության արդի մշակութաստեղծ գործունեության առումով այդ խնդիրը հրատապներից մեկն է, որովհետև այն կարող է գոնե մեղմել շահագրգիռ միջազգային կառույցների ու գաղափարախո- սությունների միջոցով ակտիվացող ու օրավուր լրջացող այն գործըն- թացը, որի հետևանքով մարդը վերածվում է կենսաբանական ռոբոտի:

20 «Աւետարան ըստ Մատթեոսի», Եր., 2005, գլ. Դ, հատ. 4:

Սերգեյ Ա. Աղաջանյան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են մշակույթի տեսության, հայկական մշակույթի պատմության, հայ նոր և նորագույն շրջանի գրականության հիմնախնդիրները: Հեղինակ է մենագրությունների, բուհական ուսումնական ձեռնարկների, տասնյակ հոդվածների, պատմվածքների և վիպակների:

Էլ. հասցե՝ sergeyaghajanyan@yahoo.com

Արսինե Ս. Աղաջանյան – գիտական հետաքրքրությունների շրջանակը ընդգրկում է անգլերենի տեսությունը, ոճագիտությունը, առցանց հաղորդակցման առանձնահատկությունները, միջանձնային հաղորդակցման մշակույթի լեզվական և հոգեբանական օրինաչափությունները: Հեղինակ է մենագրության, բուհական ուսումնամեթոդական ձեռնարկի և բազմաթիվ գիտական հոդվածների:

Էլ. հասցե՝ arsineaghajanyan@gmail.com

Summary

MANIPULATIVE FUNCTION OF THE WORD "NOTHING"

Sergey A. Aghajanyan
Doctor of Sciences in Philology
Arsine S. Aghajanyan
Candidate of Sciences in Philology

Keywords – nothing, thought and speech, manipulation, manipulative behavior, psychotic influence, ambiguity, nonexistence, nothingness, trivial, nothing, vanity, uncertainty, self-manipulation, manipulative illusion.

The ambiguity of the word **"nothing"** and the uncertainty of that meanings make it possible for the person using them to form situations of speech manipulation becoming unique, non-standard means of thoughts expressing. One of the best expressions is the famous and of folklore origin fable by “That nothing is me” by Av. Isahakyan. As is the case with all other types of this genre, this too has its own moral and disciplinary component. What is it?

According to the text of this fable, two possible lifestyles are opposed: the mayor and the dervish. It has already been discussed. As for the instructive content of the fable, it is obvious from the text that this is also the author’s ideology. The author tries to convince the reader that out of the two lifestyles presented to them

and their symbolic images, out of the values characterizing them, Dervish is preferable. A person who has formed a system of values of his inner psycho-mental freedom, positive social significance, which is significantly different from the purely biological needs of a government official-mayor. The first is intellectual, unique in the sense of his existence, in the form of his self-assertion, the second is a functionary with his place in a coexisting pattern.

However, with all this, it is necessary to keep in mind another form of verbal manipulation, in which the reader is already involved by the author of the text with his narration, created images. And this is the following. His characters embody extremely opposite, contradictory life decisions and lifestyles. In the presented specific situation, as already mentioned, the preferred type of person is Dervish, distinguished by his rich inner world. The author created a conflict where, in any case, Dervish becomes the more sympathetic and the preferred one out of these two. And the author's manipulation noted lies precisely in the life situation formed according to this idea and in not leaving the listener or reader an alternative to his narration.

Meanwhile, from the cultural and creative experience of mankind, there are other options for understanding life or choosing a lifestyle, characteristic of which is not the opposite of extreme, contradictory options. These variants lack manipulations with thought and speech, and the principle of their formation is to form another lifestyle option by a reasonable combination of possible variants. For example, famous saying from ancient Greek culture “A healthy mind in a healthy body”. Another saying about satisfying the needs of both body and soul through balancing and harmonizing is famous in Christian culture: "Not only long live the man, but also everything that comes from the mouth of God" (Gospel of Matthew, E. 10:15)., 2005, ch. D, part 4/.

In both of the latter cases, the full physical existence of a person is emphasized as a necessity, since an inferior biological existence becomes the cause of mental inferiority as well. But at the same time, the mental activity of a person is also important, without which he cannot form a lifestyle and a system of values that distinguish him from other beings.

In terms of modern cultural and creative activity of mankind, this problem is one of the most urgent, since it can at least mitigate the process that is being activated and becoming serious day by day through interested international structures and ideologies, as a result of which a person turns into a biological robot.

Резюме

МАНИПУЛЯТИВНАЯ ФУНКЦИЯ СЛОВА «НИЧЕГО»

Сергей А. Агаджанян
Доктор филол. наук

Арсине С. Агаджанян
Канд. филол. наук

Ключевые слова – «ничто», мысль и речь, манипуляция, манипулятивное поведение, психотическое воздействие, многозначность, несуществование, несущественность, тривиальное, ничего, тщеславие, неопределенность, самоманипуляция, манипулятивная иллюзия.

Многозначность слова **«ничего»** и неопределенность его значений дают возможность пользователю формировать ситуации речевых манипуляций. Они часто становятся средством выражения оригинальных, нестандартных мыслей. Одно из лучших проявлений этого слова – известная из литературы и, по всей вероятности, имеющая фольклорное происхождение басня Ав. Исаакяна «Это ничто я. Как и в случае со всеми другими произведениями этого жанра, у этого тоже есть своя морально-дисциплинарная составляющая. Что это такое?

Согласно тексту басни, были противопоставлены два разных образа жизни – Мэр и Дервиш. Что касается поучительного содержания басни, из текста видно, что это и есть идеология автора. Автор пытается убедить читателя в том, что из представленных ему стилей жизни и символизирующих их стили образов, из характеризующих их две разные системы ценностей предпочтительнее стиль Дервиша. Человек, сформировавший систему ценностей своей внутренней психической свободы, позитивной социальной значимости, которая существенно отличается от сугубо биологических потребностей государственного чиновника – Мэра. Первый – интеллектуал, самобытен в смысле своего существования, форме своего самоутверждения, второй – функционер, живущий по шаблону.

Однако, при всем этом, нужно иметь в виду еще одно проявление словесной манипуляции, в которую читателя вовлекает автор текста своим повествованием, созданными образами. Его герои воплощают противополож-

ные, крайне противоречивые жизненные решения и образ жизни. В представленной конкретной ситуации, как уже было сказано, предпочтительным образом является Дервиш, отличающийся богатством своего внутреннего мира. Автор задумал такой конфликт, при котором из этих двух персонажей волей-неволей более симпатичным и предпочтительным становится Дервиш. И отмеченная ранее авторская манипуляция заключается именно в сформировавшейся по этой идее жизненной ситуации. Это–не оставляет слушателю или читателю альтернативы по восприятию своего повествования.

Между тем, из культурно-творческого опыта человечества известны и другие варианты выбора образа жизни и ее осмысления, характерными для которых являются непротивоположность крайним, противоречивым вариантам. Эти варианты лишены словесных/эксплицитных манипуляций, и принцип их формирования заключается в разумном сочетании возможных вариантов образа жизни. Например, в древнегреческой культуре: в здоровом теле здоровый дух.

В христианской культуре известно еще одно высказывание о потребностях и тела, и души в умеренности и гармонии: «Не только да здравствует человек, но и все, что исходит из уст Божьих» (Евангелие от Матфея, е. 10: 15)., 2005, гл. Д, ч. 4.

В двух рассмотренных случаях полноценное физическое существование человека подчеркивается как необходимость, поскольку неполноценное биологическое существование становится причиной также психической неполноценности. Важна и умственная активность человека, без которой он не может сформировать образ жизни и систему ценностей, отличающих его от других существ.

В плане современной культурно-творческой деятельности человечества эта проблема является одной из актуальных, поскольку ее решение может хотя бы смягчить тот процесс, который изо дня в день становится все более агрессивным вследствие деятельности заинтересованных международных структур и идеологий, в результате чего человек превращается в биологического робота.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Աւետարան ըստ Մատթեոսի», Եր., 2005։
2. «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հատ. 4, Եր., ՀՀ ԳԱԱ, 1980։
3. **Աղայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հատ. 2, Եր., 1976։
4. **Աղաջանյան Ս.**, Բանականության ֆենոմենը և հարակից հարցեր, «Լրատու» պարբերական, Ստեփանակերտ, 2013, N 2, էջ 16–23։
5. **Աղաջանյան Ս.**, Մշակույթի տեսություն, Եր., 2021։
6. **Թումանյան Հ.**, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, Եր., 2018։
7. **Իսահակյան Ավ.**, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 5, Եր., 2014։
8. **Մակարյան Ա.**, Կրկին Պարոնյանի հետ, Եր., 2018։
9. **Պարոնյան Հ.**, Երկեր, Եր., 1969։
10. **Սուքիասյան Ա.**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., 1967։
11. «Политическая энциклопедия», ред. **Г. Ю. Семигин**, т. 1, М., 2000.
12. «Словарь иностранных слов», ред. **А. Г. Спиркин**, М., 1987.
13. «Философский энциклопедический словарь», ред. **Л. Ф. Ильичев и др**., М., 1983.
14. **Мещерякова Б. Г., Зинченко В. П.,** Большой психологический словарь, Санкт-Петербург, 2006.
15. **Фромм Э.**, Искусство быть, М., 2022.
16. **Штирнер М.**, Единственный и его собственность, М., 2021.

REFERENCES

1. “Awetaran ĕst Matt‘eosi”, Yer., 2005 **(In Armenian)**.
2. “Filosovskij enciklopedicheskij slovar‘”, red. **L. F. Il‘ichev i dr.**, M., 1983 **(In Russian)**.
3. “Politicheskaja enciklopedija”, red. **G. Ju. Semigin**, t. 1, M., 2000 **(In Russian)**.
4. “Slovar‘ inostrannix slov”, red. **A. G. Spirkin**, M., 1987 **(In Russian)**.
5. “Zhamanakakits‘ hayots‘ lezvi bats‘atrakan baṛaran”, hat. 4, Yer., HH GAA, 1980 **(In Armenian)**.
6. **Aghajanyan S.**, Banakanut‘yan fenomenĕ yev harakits‘ harts‘er, “Lratu” parberakan, Step‘anakert, 2013, N 2, ēj 16-23 **(In Armenian)**.
7. **Aghajanyan S.**, Mshakuyt‘i tesut‘yun, Yer., 2021 **(In Armenian)**.
8. **Aghayan Ē.**, Ardi hayereni bats‘atrakan baṛaran, hat. 2, Yer., 1976 **(In Armenian)**.
9. **Fromm E.**, Iskusstvo byt‘, M., 2022 **(In Russian)**.
10. **Isahakyan Av.**, Yerkeri liakatar zhoghovatsu, hat. 5, Yer., 2014 **(In Armenian)**.
11. **Makaryan A.**, Krkin Paronyani het, Yer., 2018 **(In Armenian)**.
12. **Mesh’erjakova B. G., Zinchenko V. P.**, Bol‘shoj psixologicheskij slovar‘, Sankt-Peterburg, 2006 **(In Russian)**.
13. **Paronyan H.**, Yerker, Yer., 1969 **(In Armenian)**.
14. **Shtirner M.**, Jedinstvennyj i jego sobstvennost‘, M., 2021 **(In Russian)**.
15. **Suk‘iasyan A.**, Hayots‘ lezvi homanishneri baṛaran, Yer., 1967 **(In Armenian)**.
16. **T‘umanyan H.**, Yerkeri liakatar zhoghovatsu, hat. 2, Yer., 2018 **(In Armenian)**.